

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
TATEV SCIENTIFIC-EDUCATIONAL COMPLEX

Բ
Տ
Մ
Ն
Կ
Թ
Ր
Ս
Վ
Ս
Կ
Ս
Ն
Ս

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Կ Ր Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գիտատեսական և մեթոդական հանդես

HISTORY AND EDUCATION

Research-methodical Journal

«Մանկավարժական միտք» հանդեսը (որի հավելվածն է «Պատմություն և կրթությունը») ընդգրկված է
ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի
17.12.2001 թ. միտի որոշման (արժ. N25) դոկտորական և փեկնաժողովական
ատենախոսությունների համար

3-4

2006

ԵՐԵՎԱՆ



2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՆՎՈՒՅԹԸ

ԱԼԲԵՐՏ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Արտաշիսյան դարաշրջանի Մեծ Հայքի ներքին կառույցի և արտաքին քաղաքականության մի քանի հիմնախնդիրների մասին 5–16

ԵՐՎԱՆԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մեծ Հայքի և Կոնստանդնուպոլսի հոգևոր առնչությունների պատմությունից (Արքայական հանգստարան – ó τεμένειος) 17–24

ԼԻԼԻԹ ՄԻՆԱՅԱՆ

Պոմպեոսը և քաղաքական իրավիճակը Հռոմում Ք.Ա. 54–51 թթ. (Consul sine collega–Պրինցիպատի նախափորձը) 25–39

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համակեցությունը և հակադրությունը հայոց կաթողիկոսության և Սյունյաց թեմի փոխհարաբերություններում (1286–1331 թթ.) 40–47

ՄԱՐԻ–ԱՆՆԱ ՇԵՎԱԼԻԵ

Կիլիկիայում տաճարականների ներկայության հիմնախնդրի շուրջ 48–56

ԱՐՄԱՆ ՄԱՆՈՅԱՆ

Գ.–Ա. Օլիվիեի ճանապարհորդությունը դեպի արևելք 57–61

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Արցախը և Ձանգեզուրը 1919 թ. ամռանը (Դրվագներ հակաադրբեջանական գոյամարտի) 62–68

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կառավարող ընտրանու կերպափոխումը (ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման պայմաններում) 69–74

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ

Արևմտահայերի թվաքանակի ճշգրտման որոշ սկզբունքների մասին 75–82

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պետությունների ավանդական աստիճանակարգը 83–89

ՄԱՐԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Խաղաղություն և բարեկեցություն (խաղաղապահության ձեռնարկատիրական շահագրգռությունները միջնադարից մինչև քսաներորդ հարյուրամյակի սկիզբ) 90–94

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ

ՂԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ստաժողության և որոշում ընդունելու մեխանիզմների փոխակերպումները (Պատմության հեռանկարում) 95–101

ՋԱՆԱ ՄՈՎԱՅՅԱՆ

Մահ իմացյալ և անդամահատություն մահվան սպառնալիքի ներքո (Եղիշեի Հայոց աշխարհը և Չարենցի Երկիր Նաիրին) 102–106

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԱՎԻԹ ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

(Պատմության հեռանկարում)

Ինչպես անհատը, այնպես էլ հանրությոն պարբերաբար կանգնում է առտնին և գիտական, պարզ ու բարդ խնդիրների լուծման առջև: Եվ յուրաքանչյուր հերթական խնդրի լուծումից է կախված հետագա խնդիրների լուծման ալգորիթմի ձևավորումը: Երբ սկսում ենք խոսել հանրության կողմից խնդիրների լուծման ուղիների և ընդհանուր օրինաչափությունների մասին, ապա անհրաժեշտ է լինում ներմուծել *հասարակական մտածողություն* եզրը, որը տվյալ պատմական ժամանակաշրջանում տվյալ ընկերային միջավայրում ձևավորված մտածողության հիմնական հարացույցն է: Նրանով են պայմանավորվում խնդիրների նկատմամբ հանրության ընդհանուր և մասնակի մոտեցումները:

Հայսմ կարող ենք ասել, որ հասարակական մտածողությունը նախ և առաջ ենթադրում է կենտրոնացում հանրության առջև ծառայած հիմնախնդիրների որոշարկման և լուծման օրինաչափությունների վրա: Դրա համար պարտադիր է հստակ բանաձևել հետևյալ հիմնական զինված հասկացությունները.

ա. խնդրի լուծում — խոսքը քայլ առ քայլ իրականացվող տրամաբանական լուծումների ուղիների բացահայտման, ձևակերպման և ընտրման մասին է,

բ. որոշման ընդունում — նպատակն է գտնել *ամենալավ* լուծումը, թեպետ տրամաբանական առումով բացահայտ ճիշտ որոշումներ չկան: Այս պարագային այլընտրանքների գնահատման հարցում մեծ դեր են խաղում ժամանակաշրջանի արժեքային կողմնորոշումները, կենսափորձը, հասարակական մտածողությունը¹:

Դավիթ Յայրապետյան — ԵՊՀ հոգեբանության ամբիոնի դասախոս:

Ահա թե ինչու, երբ քննարկում ենք մասնակի խնդիրների լուծման օրինաչափությունները, կարող ենք բավարարվել անձի մտածողական գործառույթների վերլուծությամբ: Սակայն երբ քննարկվում են որոշում ընդունելու հոգեբանական ընդհանուր հարացույցները, ապա անհարիր է բավարարվել լոկ տվյալ դարաշրջանը ներկայացնող անհատների մտակեցվածքի և գործողության շարժառիթների ուսումնասիրությամբ: Առավել արդյունական և համակողմանի վերլուծությունը ենթադրում է պատմական տարբեր դարաշրջաններին ներհատուկ մտածողության գերակշիռ ուճերի (հասարակական մտածողություն) քննարկումը:

Հայսմ ցանկանում ենք ընդգծել, որ *մտածել* նշանակում է մշակել քայլերի այնպիսի համակազմ և կանոնակարգված հարցերի այնպիսի շարք, որոնք ի գորու են անհատին կամ խմբին բերել առավելագույն արդյունական որոշումների: Իր հերթին դրանց իրագործումն ի գորու է ուրվագծել խնդրի ճշմարիտ լուծման հեռանկարը: Ամեն դարաշրջանում խնդրի ձևակերպման առանձնահատկությունները և դրան միտված մտածերը հույժ կարևոր են որոշում ընդունելու օրինաչափությունների ըմբռնման ճանապարհին²:

Այդուհանդերձ, ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ որոշ ուսումնասիրողներ բացառում են մտածողության պատմական զարգացումը: Ըստ նրանց հայեցակետի՝ պատմական տարբեր դարաշրջաններում մարդկային մտածողությունը գործառել է նույն սկզբունքներով և օրենքներով: Նրանք գտնում են, որ մտածողությունը գոյություն ունի սոփեստների, Պլատոնի և հատկապես Արիստոտելի կողմից բանաձևված դատողությունների և մտահանգումների ձևով միայն, որոնցից անդին պարզապես գոյություն չունի: Նման մոտեցումը չի կարող կենսունակ համարվել, քանի որ տրամաբանական կառույցները դեռևս բավարար չեն պարառելու մտածողության բազմաշերտ ողջ համալիրը: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև որոշում ընդունելու մտահոգեբանական բարդ գործընթացին: Կարծում ենք, վերջինիս համար հույժ անհրաժեշտ է համակարգային մոտեցումը՝ առնվազն հետևյալ կառուցվածքային բաղադրիչների առկայությամբ. գործընթացներ, գործառնական կառուցվածքներ, նյութի տեքստային կազմակերպում, ձևակազմություն և բաղադրիչների միջև շարակարգությունների հաստատում³:

Մեկնարկելով ասվածից փորձենք համառոտ ներկայացնել պատմական տարբեր դարաշրջաններում գերակա մտածական համալիրների պատկերը և դրանց կոնկրետ հասարակական աղբյուրները: Այս պարագային, հարկավ, անհրաժեշտություն է առաջանում հստակ սահմանազատելու *հասարակական մտածողության* արևմտյան և արևելյան տարակերպերը, որոնք գործառել են միևնույն պատմական դարաշրջանում, սակայն ըստ տարբեր սկզբունքների և արժեքների:

Մենք մեկնարկում ենք այն մոտեցումից, համաձայն որի մտակեցվածքի զարգացումը պայմանավորված է ընկերային կենսափորձով՝ ընթանալով մեղ գործառնական մտավոր աշխատանքից (որում ձևը դեռևս տարանջատված չէ բովանդա-

կուբյունից) դեպի վերացական, տեսական մտածողությունը:

Նախնադարյան մարդու միտքը բնագոյային էր և խմբակենտրոն պայմանավորված բացառապես գոյատևման շարժառիթներով ու հետաքրքրություններով⁴: Ընդամենի, գոյատևման ռեժիմի ելակետային վիճակը նախամարդու բացարձակ կրավորական կեցվածքն էր շրջակա իրականության նկատմամբ: Սակայն հընթացս բազում դարերի (հատկապես մեզուլիթի և նեոլիթի դարաշրջաններում) աստիճանաբար ձևավորվեց իրականության նկատմամբ ներգործուն վերաբերմունք, որը ենթադրում էր վերջինիս ղեկավարման և բարեփոխման ճիգ: Հարկավ, սա ենթադրում էր իրականության պատկերի որոշակի բանականացում: Նույնը վերաբերում է նաև հանրույթի կողմից ընդունված որոշումների որակական չափանիշներին: Սակայն ընդհանուր առմամբ նախնադարյան մարդու մտածողությունը շարունակում էր մնալ ինտուիտիվ, ռեակտիվ, զուգորդական և սուբյեկտիվ⁵:

Հին հույների (Ք.ա. VIII–VI դդ.) մտածողությունը միտվեց դեպի տիեզերակենտրոնություն: Ընդհանուր առմամբ գերակա էին մտածողության արտածական (դեդուկտիվ) որակները: Սակայն ներմուծվեց նաև ինդուկտիվ դատողությունների հիմամբ շրջակա աշխարհի երևույթների ընկալումը: Հին հույների հղացքները, որպես կանոն, ընդհանրական բովանդակություն ունեին և հիմնվում էին *արտաքո* (տեսական) դիտարկման վրա: Այս հանգամանքը նկատի ունեն հետազոտողները, երբ վերջիններս բանաձևում են իբրև *պլաստիկ ընկալման և մտքի արգասիք*: Նման մտածողությանը ներհատուկ է երևույթի խնդրարկման (հարցադրում), նպատակի ձևակերպման և հետազոտության գործընթացների ամենասերտ կապը: Մինևույն ժամանակ առաջին անգամ գիտակցվում է քանակի և որակի փոխհարաբերակցության խնդիրը: Հույները գերադասում էին որակական վերլուծությունը, իսկ քանակային դիտարկումները (մաթեմատիկա) ստորադրում վերջինիս⁶:

Ի տարբերություն արքայիկ դարաշրջանի՝ դասական հունական մտածողությունը (V–IV դդ.) մաթեմատիկական դիտարկում էր իբրև գիտելիքի ձեռքբերման և բնության ճանաչողության արժեքավոր գործիք: Սակայն այս հիմամբ ծնվող տեսությունները ներկայանում էին իբրև տրամաբանական հետևությունների (սիլլոգիզմ) շարունակական լծորդություններ: Հույները հրաժարվում էին գիտափորձերից, նրանց առաջին հերթին հետաքրքրում էին գոյակարգի ընդհանուր կապերն ու ալգորիթմները: Ստեղծագործականն այս դարաշրջանում ի հայտ է գալիս երկու ձևով.

ա. աստվածային (տիեզերքի արարում),

բ. մարդկային (ինաստասիրություն, արվեստ, գիտություն)⁷:

Ստեղծագործական արարման ընդունակությունը անտիկ ժամանակներում համարվում էր մտահայեցողության հստակ արտահայտչաձև: Հայսմ ամենայն գործունեություն համարվում էր հայեցողությունից ցածր, քանի որ մարդն արարում է վերջավորը, իսկ մտընկալում և ճանաչում հավիտենականը: Նյութական նորի արարումը համարվել է հավերժական արքետիպի «վերարտադրության վերարտադրություն», որն արտացոլում է վերջինիս ճշմարտությունը միմիայն մոտավոր երանգներ-

րով: Մինչդեռ մարդու գերագույն առաքելությունն էր համարվում անմիջական կապ հաստատել արքետիպային ճշմարիտի հետ⁸:

Աշխարհընկալման և մտածողության հումական կերպը մեծ ազդեցություն ունեցավ Արևմուտքին ներհատուկ մտակեցվածքի ձևավորման համար:

Արդի արևմտյան կենսակերպին ներհատուկ ուղղորդված մտքի և գիտության բացարձակ գերակայության հարացույցը, սակայն, կայացել է միջնադարյան աստվածակենտրոն մտակեցվածքի ընդերքում հընթացս բազում դարերի: Այս դարաշրջանում մտածական գործընթացը հերմենևտիկ (մեկնողական) բովանդակություն ուներ: Այն կանոնակարգված էր և հիմնված առավելաբար հավատի վրա: Ցանկացած հարցի պատասխան պետք էր փնտրել աստվածային Կամքի ծիրում:

Այս հիմամբ աննախընթաց զարգացում ապրեց տրամաբանությունն իբրև Աստծո արարչության (Տիեզերակարգ) և նրա առանձին դրսևորումների դիտարկման, քանակական բնութագրման և վերլուծության միջոց: Ի հետևանս այս ըմբռնման միջնադարյան աշխարհընկալումը շեշտված պատմական բովանդակություն և իմաստ ուներ, քանզի Արարչի ստեղծագործական Կամքը ուղղորդել և շարունակում է ուղղորդել Աշխարհին և մարդուն: Ինչ վերաբերում է գիտահետազոտական և գեղարվեստական ըմբռնումներին, ապա դրանք հանդես էին գալիս երկրորդական դերակատարությամբ⁹:

Այսուհանդերձ, աներկբա է, որ միջնադարյան մտակեցվածքը հիմք է հանդիսացել աշխարհի հետազոտական ընկալման հարացույցի մշակման համար: Այն ներուստուկ է նոր ժամանակաշրջանին, որը սկսվել է Վերածննդի դարաշրջանից ի վեր: Իսկ ավելի առարկայորեն XVII դարից: Հետազոտական այս հարացույցի առաջին համընդգրկուն ձևակերպումը պատկանում է Ռ. Դեկարտին, որը վերջինիս հիմքում տեսնում էր մտածական գործունեության հետևյալ հնարավոր զարգացումները.

- ամեն ինչ կարելի է բաժանել մասերի,
- մասերից յուրաքանչյուրը կարելի է ձևափոխել,
- մասնավոր խնդրի լուծումը կարող է լուծել խնդիրն ամբողջությամբ,
- ամբողջը ոչ այլ ինչ է, քան մասերի հանրագումար (pers pro toto)¹⁰:

Ցավոք, մտածողության այս կերպը անխուսափելիորեն հանգեցրեց մարդու (միկրոկոսմ) և տիեզերքի (մակրոկոսմ) մեխանիստական ընկալմանը: Երկուսն էլ բացատրելի են իբրև համաչափության միջավայրեր: Ուստի բացատրելի են առավելաբար մաթեմատիկայի միջոցներով:

Այնքան մեծ էր Դեկարտի ներմուծած հետազոտական (կարտեզյան) մեթոդի ազդեցությունը, որ առայսօր շատերը գտնում են, թե խնդիրների լուծման և որոշում ընդունելու ավելի արդյունական եղանակ գոյություն չունի:

Իհարկե, մտածողության և աշխարհընկալման վրա մեծ էր այն *հասարակական համատեքստի* ազդեցությունը, որը կազմում էր դարաշրջանի բովանդակությունը. «ժամանակակից գիտությունը Եվրոպայում զարգացել է պատմական զարմանալի պայմաններում: Վերածնունդն, օրինակ, խրախուսեց անհատականությունը, ներ-

կայի և ոչ թե ապստոսայի հանդեպ հետաքրքրությունը: Ռեֆորմացիան և հակառեֆորմացիան թուլացրին կրոնի անխախտ հիմները: Կապիտալիզմը ստեղծեց նոր գիտելիքների ձգտող, փորձարարականության հակված, բնության օգտագործմանը միտված դասակարգ: Ճանապարհորդությունները մեծացրին հայտնի աշխարհի սահմանները և բերեցին նախկինում անհայտ բազում երևույթների ճանաչողությանը»¹¹:

Ընդհանրացնելով նշենք, որ քննության առարկա բոլոր դարաշրջաններում արևմտյան ձևական տրամաբանության ծիրում ցանկացած հարցադրում և պնդում ճիշտ է կամ սխալ: Ի հակադրություն արևմտյան այս *սևուսպիտակի* արևելյան մտածողությունը ձգտում է աշխարհն արտացոլել ավելի խոր և զգայունակ նրբությունների և անորոշությունների մեջ: Արևելքում գտնում են, որ իրականությունն ի գործ է պարառել մի շարք ճշմարտություններ: Չնայած բազում մաթեմատիկական և գիտական-հայեցողական նվաճումներին՝ արևելյան հանրություններն իրենց ընդհանրական համակեցական փորձը չէին կառուցում հետազոտական արդյունքների վրա:

Հայսմ արևմտյան և արևելյան մտավոր-հասարակական փորձառությունը կարելի է բանաձևել հետևյալ կերպ: Արևմուտքում երևույթներն ուսումնասիրելիս առաջնորդվում էին մակածական (ինդուկտիվ) մեթոդով (մասից դեպի ամբողջը), ստացված մասնակի արդյունքները համակարգում էին՝ ծնունդ տալով ամբողջի մասին ընդհանրական գիտելիքի: Ի հակադրություն դրա՝ Արևելքում առաջնորդվում էին արտածական (դեդուկտիվ) մեթոդով (ամբողջից դեպի մասնակին): Երևույթների մասին ընդհանուր պատկերացումներից հետևություն էին անում նրա մասնակի իրողությունների մասին¹²:

Վերլուծելով որոշում ընդունելու մեխանիզմները և մարդկության պատմության ընթացքին մտածողության զարգացման առանձնահատկությունները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ արդի հասարակությունը կանգնած է ընկերային մտակեցվածքի նոր կերպերի և չափորոշիչների կայացման ճանապարհին: Ինչպիսի՞ն պետք է այն լինի և ի՞նչ պահանջներ պետք է բավարարի: Գիտության տարբեր բնագավառների հետազոտական արդյունքներն ի մի բերելով (մարդաբանություն, ընկերային հոգեբանություն, տրամաբանություն, իմաստասիրություն, գիտության պատմություն և այլն)՝ կարելի է վստահաբար սահմանագծել *նոր մտածողության* հետևյալ սկզբունքները.

– *Յուրահատկության սկզբունք*: Ամեն խնդիր յուրահատուկ է, և նրա լուծմանը պետք է մոտենալ յուրովի: Նախկին փորձի կարծրատիպերի սոսկական կիրառումը միշտ չէ, որ հանգեցնում է բավարար արդյունքների:

– *Նպատակաուղղվածության սկզբունք*: Անհրաժեշտ է հնարավորինս ընդարձակել հարցադրման շրջանակները՝ տվյալ խնդրի լուծումը կառուցելով հետազոտական լայն նպատակների համատեքստում:

– *Հաջորդական լուծումների սկզբունք*: Անհրաժեշտ է մեկնարկել ամենատար-

բեր *իդեալական* լուծումներից՝ սկսելով գրոյական մակարդակից և հասնելով մինչև ամենաբարդ հարացույցներին:

– *Համակարգայնության սկզբունք*: Յուրաքանչյուր խնդրի լուծում ենթադրում է ելակետային պայմանների և խնդիրների ստանդարտացում և համակարգում: Եվ համապատասխան տարբերակի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել առկա համակարգային ենթակառույցները:

– *Տեղեկույթի հավաքագրման սահմանափակման սկզբունք*: Որոշման ընդունումը և խնդրի լուծումը առավել անարդյունավետ են, երբ առկա է, մի կողմից՝ հիմնական տեղեկույթի պակաս, մյուս կողմից՝ ոչ անհրաժեշտ տեղեկույթի հավելույթ: Ուստի լուծմանն անցնելուց առաջ անհրաժեշտ է հստակեցնել գործողությունների նպատակը և դրա իրագործման հաջորդականությունը:

– *Մարդկային գործոնի սկզբունք*: Անհրաժեշտ է կազմակերպել խնդրի լուծմանը շահագրգիռ բոլոր անձանց մասնակցությունը որոշում ընդունելու գործընթացին՝ հստակ սահմանագծելով նրանց դերակատարությունը: Անհրաժեշտ է ճշգրիտ գնահատական տալ նրանց մոտեցումներին:

– *Անընդհատ և ժամանակային կատարելագործումների սկզբունք*: Մշակելով խնդրի լուծման առկա որոշումը՝ *նոր մտածողությունը* ծրագրավորում է նաև նրա հաջորդական փուլերը: Ամեն որոշում պետք է ենթադրի հետագա զարգացում և նոր առաջ եկող խնդիրների լուծման հիմք հանդիսանա¹³:

Արդի հոգեբանական հետազոտություններում կենտրոնական տեղ են զբաղեցնում մտածողության նոր ձևի օրինաչափությունների որոնումը և մշակումը: Խնդիրների լուծման և որոշում ընդունելու մտավոր ջանքի արդյունավետության բարձրացման համար օգտագործում են ինչպես հայեցողական, այնպես էլ փորձարարական մեթոդների արդյունքները: Մեկնարկելով վերոհիշյալ հոգեբանական հետազոտությունների արդյունքներից և հիմք ընդունելով այն իրողությունը, որ մարդկային մտածողությունն անընդհատ զարգացող և կատարելագործվող գործընթաց է (ինչպես անհատական, այնպես էլ հանրության մակարդակներում)՝ միանգամայն ակնհայտ է դառնում, որ մտածողության ստեղծագործական հարացույցն այլևս այլընտրանք չունի: Մտքի տեսանելի հեռանկարը կառուցակազմվում է առավելաբար ըստ նրա չափորոշիչների:

Ծանոթագրություններ

- 6 Э. Кирхлер, А. Шротт, Принятие решений в организациях, Харьков, 2004, с. 71.
- 7 Т. В. Корнилова, Психология риска и принятия решений, Москва, 2003, с.74–75.
- 8 Г. П. Щедровицкий, Проблема исторического развития мышления, в кн. Избранные Труды, Москва, 1995, с. 510.
- 9 Г. Франкфорт, Г. Дж. Уилсон, Т.Якобсен, В преддверии философии, Москва, 1984, с.76.
- 10 М.И. Стеблин–Каменский, Миф, Ленинград, 1976, с.27.
- 11 Дж. Надлер, М. Хибино, Дж. Фаррелл, Мышление полного спектра, Минск, 2001, с. 146.
- 12 J.-P. Vernant, Les origins de la pensée greque, Peris, 1962, pp.43–46. А.И. Зайцев, Культурная революция в древней Греции, Ленинград, 1985, с.56–57.
- 13 Ա. Ստեփանյան, Պլուտինոս, Մշակութային ինքնարարումի ճիզը, Պլուտինոս, էննետաղներ, Գիրք V (Հաղագս բանականի), էջ XXV–XXVII:
- 14 О. Шпенглер, Закат Европы, Ростов–на–Дону, 1998, с.586.
- 15 Ա. Թելուց, Որնե՞ր Դեկարտ, Ռ. Դեկարտ, Քննախոսության մասին, Երևան, 1968, էջ 29:
- 16 G. Kneller, Science as Human Endeavor, New York, 1978, pp. 9–10.
- 17 Дж. Надлер, М. Хибино, Дж. Фаррелл, указ. соч., с. 159–161.
- 18 G. Kneller, Science as a Human Endeavor, New York, 1978, p. 52.